SNAKE

Bookmark

YOURI DJORKAEFF

Avec la collaboration d'Arnaud Ramsay

SNAKE

Bookmark

ՅՈՒՐԻ ՋՈՐԿԱԵՖ
Առնո Ռամսեի հետ գործակցությամբ

SNAKE

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ՕՁԸ

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Անահիտ Մեսրոպյանի

new mag

ԵՐԵՎԱՆ
2019

Bookmark

ՀՏԴ 796.332
ԳՄԴ 75.578
Ջ 850

Ջորկաեֆ Յուրի
Ջ 850 SNAKE. ֆրանսիական ֆուտբոլի օձը/ Յուրի Ջորկաեֆ,Առնո Ռամսեի հետ գործակցությամբ, Թարգմանությունը ֆրանսերենից՝ Անահիտ Մեսրոպյանի.- Եր.: Newmag, 2019.- 332 էջ:

Գիրքը լույս է տեսել 2006-ի մայիսին ֆրանսերեն: Գրքի հայերեն տարբերակն առաջին թարգմանությունն է այլ լեզվով: Ջորկաեֆը գիրքը գրել է ֆրանսիացի սպորտային լրագրող Առնո Ռամսեի հետ: Ֆուտբոլիստը պատմում է իր կարիերայի սկզբի, Եվրոպա տեղափոխվելու, սկանդալների, Նյույորքյան երազանքի, ծագման, արմատների, նախապապերի մասին: Իր ինքնակենսագրականում Ջորկաեֆը բացատրում է, թե որտեղ և ինչու է ստացել SNAKE մականունը:

Ջորկաեֆն իր գրքում հատուկ անդրադարձել է Հայաստանին ու Հայաստան կատարած այցերին, պատմություններին, հիշողություններին:

Գրքի գլուխների նախաբանները գրել են աշխարհահռչակ ֆուտբոլիստներ Դեսային, Լիզարազուն, Բլանը, Թյուրամը, Լաման, Դեշամը, Դյուգարին, Անելկան, Պետին, Բոգոսյանը, Անրին, աշխարհահռչակ թենիսիստ Յանիկ Նոան, մարզիչներ Էմե Ժակեն և Ժան Ջորկաեֆը:

Վերջաբանը գրել է ֆուտբոլիստի հայրը՝ Ժան Ջորկաեֆը: Հայերեն հրատարակության նախաբանի հեղինակը ֆրանսահայ մարզական լրագրող Ահարոն Բոյաջյանն է:

ՀՏԴ 796.332
ԳՄԴ 75.578

ISBN 978-9939-9217-0-9
Snake. ֆրանսիական ֆուտբոլի օձը © 2019, «Նյու Մեգ» ՍՊԸ
Snake © Editions Grasset & Fasquelle, 2006
Հեղինակի լուսանկարը՝ Վահան Ստեփանյանի
Շապիկի լուսանկարը՝ © Michael Regan / FIFA / Getty Images

Գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել «ԱՐԻ» գրական գործակալության միջոցով:

ՆԱԽԱԳԾԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ

TOTO GAMING

Չեմպիոնական հարթակ

www.totogaming.am

Bookmark

Ինչու կարդալ այս գիրքը

Յուրի Ջորկաեֆը ֆուտբոլիստի կարիերան սկսեց Գրենոբլի թիմում և պրոֆեսիոնալ ֆուտբոլում անցկացրեց 22 տարի՝ 1984–2006 թթ.: Նա 6 տարի խաղացել է Ֆրանսիայի ֆուտբոլի երկրորդ դիվիզիոնում, 1990-ից՝ առաջին դիվիզիոնում, 1996-ից՝ արտերկրում:

Յուրիի հետ ծանոթացել եմ Փարիզում 1995-1996 թթ. մըրցաշրջանում, երբ նա Ֆրանսիայի մայրաքաղաքի արքան էր: Բոլորը նրան պաշտում էին և նշանավոր աստղին տեսնելու համար գնում «Պարկ դե Պրենս» ստադիոն: Իսկ ես նրան այցի էի գնում Սեն-Ժերմեն-ան-Լեի Քան դե Լոժ, որտեղ մարզվում էր ՊՍԺ-ն: Հետս հաճախ Հայաստանից կամ Լիբանանից եկած հայ կամ ոչ հայ ծանոթներ էին լինում: Միասին նաև «Պարկ դե Պրենս» էինք գնում, երբ ՊՍԺ-ն էր խաղում: Երբեք չեմ մոռանա Յուրի Ջորկաեֆի անունն ամբողջ խաղի ընթացքում վանկարկող «Պարկ դե Պրենսի» հանդիսատեսներին հատկապես Փարիզում «Բաստիայի» հետ անցկացրած նրա վերջին խաղի ժամանակ»: 5-1 հաշվով ՊՍԺ-ի հաղթանակով ավարտված հանդիպման հերոսը մեր հայրենակիցն էր, որը երեք գոլ խփեց, նաև 4-րդ գոլի համահեղինակ դար-

ձավ, երբ պաշտպանը նրա փոխանցումից հետո գրավեց սեփական դարպասը:

Ամբողջ երեկոյի ընթացքում հանդիսատեսը երգում էր «Մնա, Յուրի, մնա», քանի որ արդեն հայտնի էր, որ ֆրանսահայ ֆուտբոլիստը հաջորդ մրցաշրջանի համար պայմանագիր է ստորագրել Միլանի «Ինտերի» հետ: Ինչ չքնաղ երեկո անցկացրեցի այդ օրն արտերկրից եկած ընկերներիս հետ: Այնուհետև հաղթանակը նշեցինք մարզադաշտի հանդերձարանում՝ լուսանկարվելով Յուրիի հետ, որը միշտ սիրահոժար պատրաստ էր լուսանկարվել երկրպագուների հետ: 1997-1998 թթ.Միլանի «Ինտերի» կազմում Յուրին նվաճեց ՈՒԵՖԱ-ի գավաթը՝ «Լացիոյի» հետ խաղում հաղթելով 3-0 հաշվով: Դա տեղի էր ունենում ընդամենը մեկ տարի անց, գավաթի եզրափակիչի պատասխան խաղում «Շալկեից» 11-մետրանոցներով կրած պարտությունից հետո (1-1, այնուհետև 4-1՝ 11-մետրանոցներով):

Իր խաղի ինքնատիպ ոճը նա ցուցադրել է աշխարհի բոլոր ստադիոններում: Օժտված խաղացող էր, միաժամանակ աշխատասեր մարզիկ: Յուրին երկար ժամանակ էր անցկացնում մարզվելով և համբերատար կատարելագործում իր հարվածները: Դարպասի առաջ չափազանց կենտրոնացած էր լինում: 11-մետրանոց իրացնելու յուրօրինակ ոճ ուներ, որն իր վրա զգացել է 11-մետրանոցներ հետ մղող Հայաստանի հավաքականի լեգենդար դարպասապահ Ռոման Բերեզովսկին, երբ 1999-ի սեպտեմբերի 8-ին Երևանում Զորկաեֆի 11-մետրանոցի և երկու վճռորոշ փոխանցումների շնորհիվ՝ Ֆրանսիայի հավաքականը 3-2 հաշվով հաղթեց Հայաստանի թիմին:

Յուրին snake (օձ) մականունը ստացել է օձանման հետա-

գծով հզոր հարվածների շնորհիվ, որոնք այնքան խնդիրներ են ստեղծել հակառակորդ թիմերի դարպասապահների համար: Առաջինն այս մականունը շրջանառության մեջ դրել է նրա թիմակից Բեռնար Լաման: Յուրին մրցակիցների արանքով գնդակն այնպես էր վարում, կարծես օձը սողար. ու դա անում էր զարմանալի թեթևությամբ: Նա միաժամանակ 9 համարի կենտրոնական հարձակվող էր և 10 համարի դիսպետչեր, որը բոլորից ավելի լավ էր տեսնում դաշտի ընդհանուր պատկերը: Այս է պատճառը, որ նրան անվանում էին «№ 9½»:

Որտեղ էլ եղել է ֆրանսիական ֆուտբոլի նախկին փառավոր դեմքերից մեկի՝ Ֆրանսիայի հավաքականի՝ ծագումով կալմիկ կենտրոնական պաշտպան Ժան Ջորկաեֆի և հայ մոր՝ Մարի Օհանյանի այս զավակը, իր շուրջ ստեղծել է ուրախության, տոնի և բարեկամության մթնոլորտ: Ֆուտբոլիստի իր կարիերայի ընթացքում նա վայելել է բոլոր թիմակիցների, ակումբների ղեկավարների, լրագրողների, երկրպագուների և իր հետ առնչված բոլոր մարդկանց սերը: Նրան սիրում էին նաև իր մրցակիցները, մրցավարները, որոնց նա հարգում էր և օրինակելի մարզական պահվածք դրսևորում թե՛ խաղադաշտում, թե՛ դրանից դուրս: Այդ է պատճառը, որ բոլոր նրանք, ովքեր կկարդան Snake գիրքը, կգերվեն այս ոչ սովորական կերպարով: Մեղմ, առինքնող, ընկերական, ազնիվ, պատրաստակամ և հարգալից անհատականություն. այսպիսին եղել է նախկինում և շարունակում է մնալ մեր Յուրի Ջորկաեֆը:

Ահարոն Բոյաջյան

Մարզական լրագրող, Ֆրանսիա

Բովանդակություն

Գլուխ 1 **Տափաստանների տիրակալը** 15
Մարսել Դեսայի

Գլուխ 2 **Ուխտագնացություն Հայաստան** 34
Բիքսան Լիզարազու

Գլուխ 3 **Մոցարտը, Էլզասը և ես** 49
Լորան Բլան

Գլուխ 4 **Ժայռի վրա** 74
Լիլիան Թյուրամ

Գլուխ 5 **Պարկը՝ իմ զարմանահրաշ պարտեզը** 94
Յանիկ Նոա

Գլուխ 6 **Ինտեր. համակրելի անպատկառների ակումբը** 121
Բեռնար Լամա

Գլուխ 7 **Էմեի երկու արևները** 151
Էմե Ժակե

Bookmark

Գլուխ 8 **Մեր աշխարհը** 175
Դիդիե Դեշամ

Գլուխ 9 **Հուլիսի 12-ի հորձանուտները** 191
Քրիստոֆ Դյուգարի

Գլուխ 10 **Կապույտ ապրանքանիշ** 216
Նիկոլա Անելկա

Գլուխ 11 **Գերմանական մղձավանջ** 241
Էմանուել Պեկրի

Գլուխ 12 **Պատանեկան ախորժակ** 265
Ալեն Բոգոսյան

Գլուխ 13 **Եթե նախագահ լինեի** 286
Թիերի Անրի

Գլուխ 14 **Ամերիկյան երազանք** 297

Վերջաբան 312
Ժան Ջորկաեֆ

Bookmark

Բովանդակություն

Գլուխ 1 **Տափաստանների տիրակալը** 15
Մարսել Դեսայի

Գլուխ 2 **Ուխտագնացություն Հայաստան** 34
Բիքսան Լիզարազու

Գլուխ 3 **Մոցարտը, Էլզասը և ես** 49
Լորան Բլան

Գլուխ 4 **Ժայռի վրա** 74
Լիլիան Թյուրամ

Գլուխ 5 **Պարկը՝ իմ զարմանահրաշ պարտեզը** 94
Յանիկ Նոա

Գլուխ 6 **Ինտեր. համակրելի անպատկառների ակումբը** 121
Բեռնար Լամա

Գլուխ 7 **Էմեի երկու արևները** 151
Էմե Ժակե

Bookmark

Գլուխ 8 **Մեր աշխարհը** 175
Դիդիե Դեշամ

Գլուխ 9 **Հուլիսի 12-ի հորձանուտները** 191
Քրիստոֆ Դյուգարի

Գլուխ 10 **Կապույտ ապրանքանիշ** 216
Նիկոլա Անելկա

Գլուխ 11 **Գերմանական մղձավանջ** 241
Էմանուել Պեկրի

Գլուխ 12 **Պատանեկան ախորժակ** 265
Ալեն Բոգոսյան

Գլուխ 13 **Եթե նախագահ լինեի** 286
Թիերի Անրի

Գլուխ 14 **Ամերիկյան երազանք** 297

Վերջաբան 312
Ժան Ջորկաեֆ

Bookmark

Նվիրվում է տատերիս և պապերիս՝
Թեոպիստին, Կարոյին, Մադլենին և
Արմանին, որոնք կյանքիս ներշնչանքն են
եղել յուրաքանչյուր պահի:
Մեր նոր սերնդին, որպեսզի շարունակի
մեր ավանդույթները:

Յուրի Ջորկաեֆ

Ամելիին,
Լուսիո Մադի հիշատակին:

Առնո Ռամսե

Bookmark

Գլուխ 1

Տափաստանների տիրակալը

Շչակների համառ ոռնոց: Խճուղին մշտապես ակոսող, պտտվող լուսարձակներով ոստիկանական, հրշեջ ու շտապօգնության ավտոմեքենաներ: Այս անտանելի աղմուկն ու վայրի ոռնոցներն արտաքին պատշաճության մաս են, այնպես որ մարդկանց թմբկաթաղանթները չեն էլ վրդովվում աղմուկի մակարդակից: Դեղին տաքսիների ձայնային ազդանշաններ, Ground Zero-ից[1] լսվող մուրճերի ձայներ, Բրուկլինյան կամրջի երթևեկի խցանումներ, Էլիս կղզու[2] վրա ճախրող ճայեր, չինական շուկայի ժխոր, Հուդզոնով անցնող լաստանավերի առաջացրած ալեբախություն: Հենց այս հզոր իրարանցումն է Նյու Յորքի ֆիրմային նշանը: Երբ տոների առթիվ Ֆրանսիա վերադարձանք, երեխաներս ասացին. «Հայրիկ, լսո՞ւմ ես՝ ինչ լռություն է». բայց ես, միևնույն է, սիրում եմ «Մեծ խնձորի»[3]

---

[1] Նագասակիի ատոմային պայթյունից զոհվածների հուշարձան Նյու Յորքում: (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

[2] Էլիս կղզին ներգաղթյալների ամենամեծ կայանն էր, որտեղով ԱՄՆ-ն ընդունել է պատմության մեջ ներգաղթյալների ամենամեծ հոսքը: 1892-1924 թթ. շուրջ 12 միլիոն մարդ է երկիր մուտք գործել Էլիս կղզուց:

[3] Նյու Յորքի ամենահայտնի մականունը: Ծագել է 1920-ականներին: